

քայուլեան արժանի ըլլամ նէ ,  
պատճառը դուն ես , հայր իմ սիրե-  
լի . անոր համար մեռնելէս առաջ մէյ-  
մըն ալ ուզեցի չնորհակալ ըլլալ քեզի  
որ իրաւցընէ իմ ազատիչս ու հայրս  
ես : Ըջթը ըրէ իմ հոգւոյս համար :  
Սահուն անկողնէն կը գրէ քեզի աս  
թուղթս անկկայ որ յաւիտեան պիտի  
օրհնէ զքեզ :

ՌՈՃԵՐ

Ա Ռ Ա Կ

Ընդդ - Ընդդ :

( ) ր մը աղւաւը ծեր անգղի՝ մը կը  
պատահի , կը տեսնէ որ արտում տը-  
խուր՝ գլուխը կախած տարակուսած  
կեցեր է . “ Ի՞նչ ունիս հայրիկ , ինչու  
տրտում ես , ” կ'ըսէ : “ Ս'ի հարցըներ  
որդի , կ'ըսէ անգղը . աս մաղձոտու-  
թիւնը շատոնց է որ վրաս է . Ի ոգ-  
ման բժշկին գնացի <sup>1</sup> , դեղ մը ուզե-  
ցի , պատասխան տուաւ ինծի թէ ատ  
հիւանդութեանդ դեղը ան է որ եր-  
թաս մէկ լեռ մը կամ բլուր մը գրա-  
նես , ուր որ դուն աղտոտած չըլլաս .  
հոն կեցիր , կ'ըսենտնաս : ( ) րերով  
ամիսներով փնտռեցի , անանկ տեղ  
մը չգտայ . աս է ահա տխրութեանս  
պատճառը , ” :

Սարգս ուր որ երթայ՝ իր պակա-  
սութիւնը հետը կը տանի . ինքն ի-  
րեն պիտի մեղադրէ՝ երբոր տեղ մըն  
ալ հանգստութիւն չգտներ :

<sup>1</sup> Ագապա :

<sup>2</sup> Լոգման անունով հռչակաւոր բժիշկը Արա-  
բացոց Եսովպոսն է , վասն զի իրէն վարքն ալ  
առակներն ալ Եսովպոսներուն շատ նման են :  
Արաբերէն անունը Լոգման է՝ Բիւր՝ Լոգման Իմաստն  
ալ կը նշանանակէ՝ Լոգման Բժիշկ ալ . ուստի Արա-  
բացիք կ'ըսեն թէ աս իմաստունը Արաբահամ նա-  
հապետին ժամանակակից էր , ումնք ալ թէ Դաւիթ  
մարգարէին տունն էր . ստոյգը յայտնի չէ :

Իսկ ան օգտակար գեղը որ Լոգման բռնու- կը  
սուի ռամիօրէն , հոգման բռնու- հասկընալու է .  
վասն զի հոգմանն անունով գերմանացի բժշկին  
հնարածն է , որ 1662ին ծնած էր Գերմանիա :

ԲԱՆԱՍՏԵՂԾՈՒԹԻՒՆ

Օրհնութիւնս Գիւղերու Սէրն Աստուծոյ :

Բ .

ՍՔԱՆՁԵԼԱՐՈՒՆՍՏ այլ որքան գործք են քոյն ,  
Աստուած իմ , նոյն սիրահարուստք երեկն .  
Եւ ոչ ուրեք այնպէս փայլեն անպատում  
Որպէս 'ի փառս Զարտարութեանդ 'ի մարդում .  
Եւ հոգս անգամ , հոգս զի հոգւոյ է գրակից  
կամ զի մատանցդ հիւսուած՝ պատմէ զսէրն անբիծ .  
Եւ իբրու թագ չըքնաղ 'ի մէն մի ականս  
Ամենկին չըքնաղ են կերպք մարդկութեանս :  
Փափուկ սրղայն սրնեալ 'ի մօրն օշարակ  
Ի գիրք ծոցոյն մինչ ընդ երկինս ձգէ զակն՝  
Ո՛չ քան ծնողաց սիրոյն քո զանձն ասէ ծնունդ ,  
Եւ անիմայ պապալքն օրհնեն սուրբ զանունդ :  
Կոյն յամփոփել զկամարագէղ յունից լար ,  
Եւ զկարմրութիւն այտին համեստ ածել վայր ,  
Կամ յորժամ բուռն երիտասարդ օրինաց  
Իբր աւազին չիչնէ գրծել սոնքն ալեաց ,  
Եւ կորացեալ ժրտէ յերկրէ զիւր պարէն ,  
Ո՛չ հէշտաբար և այնք ըզսէրդ համբուրեն :  
Եւ ծեր Զահաան երբ 'ի վարսից տարագրեծ  
Զգանդալ աւուրս ձգելով հանգէպ լուռ աստեղ ,  
Բաժանէ զաչս առ քեզ ուսու հոն իւր յետին ,  
Որ այլ նեցուկ հրգորքան զսէրն այն հիգին : —  
Ո՛հ , և պըճնեալն 'ի թագ մական ուրի գահոյս  
Իշխանն աղանց հրամանահան յընդհանուր՝  
Քեզ վերակնէ , մաղթէ պատգամս 'ի յերկնուտ ,  
Եւ ոչ իւրեք բայց քե պարծի գող հարուստ :  
Եւ մուրկին յորս պատառոյն դուռն 'ի դրանէ  
Եւ զարտասուն անգամ յանուն քո ըմպէ .  
Եւ թէ լըքցի երբէք նօթի և ծարաւ ,  
Երթեալ նրստի ողորմութեանն ընդ յարկաւ ,  
Գիտէ զի անդ ուր հաստատեացն զիւր բոյն  
Ի սպառ չկարէ նմա սէրն առնել չքստոյն : . . .

Ո՛վ յիշատակ մեծ , յիշատակ աստուածեան .  
Եւ տակաւին գանդաղեցիմ յայդ խորան  
Մատչել ընդ խումբ բազմաժողով մարդկութեանս  
Եւ գրկովին ընդ սէր քո գալ 'ի սքանչանս .  
Զի ո՛ւր սաստիկ այնպէս , ո՛ւր վեհ և չըքնաղ  
Յայտնիցի սէր՝ քան 'ի կրօնից սուրբ փարախ :  
Լուրձի պարկէշտառ դուրս հընչէ զնեղքին շնորհ ,  
Անմահութեան նախաշաւիղ լուսաւոր .  
Ուր քան զճրագաց ակն հաւատոյ զփայլ սիրոյն  
Եւ քան ծաղկանց ըզգայ բուրման սեղանոյն .  
Զամէն հասակ անդ տեսանեմ յեւ պղծուն  
Ի հողամած ծերոյ ցմանկիկ կաթնասուն ,  
Ամենեցուն մի շունչ մի ուխտ և մի սէր ,  
Ուղղեալ ըզձեռս և զաչս և սիրտս առ նոյն տէր . . .  
Այլ ո՛վ հրաշից հրաշք , ո՛վ սիրոյն մեծութեան  
Որ զմեծդ Աստուած առեալ ձրգէ 'ի սեղան :  
Թէպէտ անծախս՝ հուրդ 'ի վասնէն հանգարտի՝  
Թողեալ ըզդոյս , ըզփառս , ըզծոցն հայրենի  
Սէրդ անըսկիզբն , ինքնին յընդմեր խարոյկ  
Ի ճենձերեւ չափաւորիս , զի կեցցուք .  
Ի զգինս հոգւոյ զարկնդ ցոյէս վերջապէս  
Եւ սրտաբախ չըրթանցրս տաս զքո մարմին .

Ձամբաւութիւնդ 'ի գոյն հոգւոյ տարածես  
Դիմակալել աստուածութեանըդ տաս մեզ .  
Այդքան հրգօր է սէր , զի զտէրն և զծառայ  
Ի մի ձուլեալ թագաւորէ գերակայ . . .

Ի սուրբ տանէն դառնան հոգիք զուարթացոյնս ,  
Եւ մոռանան թաղծեալք ըզվիշարս թագունս .  
Բոլոր մարդոյս հանդէսը , կենաց մուտք և ելք ,  
Սուրբ օծութիւնք , հարսն և փեսայ զուգաթեք  
Անգր ընթանան առնուլ զօրհնիս քաղցրացօղ ,  
'Կովաւ գիւրին ցաւք և հանգիստն իսկ 'ի հող . . .  
Ո՛հ , ես քանիցս ըզքեզ տեսի , զքեզ սրբիկ ,  
Ըզծերդ անկար , զմտադամայրդ և զաղջիկ ,  
Ձի զհետ կիսոյ սրբախցդ որ անդ վեր թըռեան  
'Քաղցրիկ ցօղով լըցեալ լալեացրդ զաման ,  
Եւ զողբածայն ուխտս 'ի սրբախ յուզելով  
Իբր ըզբուրուաւ երեկոյն լի խրնկով ,  
Գալով գայիք տալ զկէսն յերկին , զկէսն 'ի վեմ՝  
Ուր սէր զյեախն ձրգէ զկրնիքն ուղիւ ածեմ .  
Ձանմահութիւն 'ի մահու , զհուր 'ի միտրոց  
Գանձեալ յուսով և դառնայիք յետս անկոծ . . .

Տեսի յաճախ ըզմիջօրեաւ տօթակէզ  
Ընդ վարսագեղ ուռեաւ , ջընջան առուին հեզ ,  
Ձակն ըզօտիւ հովուեակն ածէր ընկողնեալ ,  
Դառնայր դառնայր ասպալեթեր լուսափայլ .  
Եւ հեռագոյն 'ի գուռն անկեալ զհովուեակն  
Պաշտօն ծառոյն 'ի կախ ածէր մեծ Վուսին .  
Եւ անդ զուարթուն վայրենայած 'ի սրբախցն  
Ի վեր ուղղէր սիրապատար տենչ և զեղծ :  
Եւ յորժամ հայրն աւուր քաղեալ ըզճաճանչ  
Յովկիան դեմեգեալ գաշտէն դնայր նահանջ ,  
Տեսանէի զքաղաքորդին և զգեղձուկ  
Ի կրպակաց յանդէն 'ի դարձ , միաչուք  
Ձհետ հանդարտիկ գիշերաբեր պրընձոյն  
Դիմել առ տէր յետին աւուրն յայն ողջոյն :  
Իսկ ինքդ Աստուած ամենակն սէր և գուծ  
Որ անդ այգուռն զքեզ ինքն 'ի կեր մեղ ետուրդ ,  
Իբր հայր զորդիս յերեկոյն օրհնութիւն  
Ձայնեալ 'ի սիրտս յայն կոչէիր սեղանոյն .  
“ Եկալք որդեակք իմ տաժանեալք բեռնաւորք ,  
” Ես հանգուցից ըզձեզ գըթածըս ձեռք ,  
” Եւ որ դթեցէք տրկարութեան դիւրանաց՝  
” Ըզուծ իմ քաղցր առէք դարձեալ ձեզ 'ի սանձ .  
” Գըռջիք ներուժն , այլ միայն տուք զարտասուս ,  
” Յուցէք հաւատս , 'ի սէր լըցջիք և 'ի յոյս ” : . . .  
Աւասիկ տէր , ահա որդիքդ յորքս քոյ  
Երախտապարտք , անկեալք յամօթ սուրբ սիրոյ . . .  
Յառնեն , շնորհօքդ 'ի սիրտ , անուամբդ 'ի շըրթունս  
Եւ զուարթութիւն յիւրաքանչիւր խաղան տունս :  
Ո՛վ քանի քաղցր է նոցա հրատն ընտանի ,  
Պարզ խընջոյք , սէր զուգակցաց , գուծ մայրենի .  
Եւ թէ գիշերք զուարճախօսիկք երկայնին ,  
Ժամք քրիստոնեայք 'ի լար սիրոյ քո չափին .  
Եւ մինչ հանդարտ յոգիսն հանդարտ փարէ քուն  
Ո՛չ ապաքէն սիրոք սիրով կան դեռ արթուն : . . .

Այո , անբուն է սէր . պատրեալ զկիրս համայն  
Կայ անմահիդ հանդէպ միայն ընդ միայն .  
Սէր ոչ նընջէ . յաճախ 'ի պահս այն խորին  
Մինչ լուռ գիշեր եգեալ էր թագ զեթերին ,  
Յանկարծ հերձեալ զոսկեթեւ քնոյ վարագոյր  
Բացուստ վանգիւն լըսէի քաղցր և մաքուր .  
Ձի սէր , անժոյժն սէր իջեալ առ պրընձն՝  
Ձայն գողանայր , կոչէր 'ի սիրտ զնախկին իւզ ,  
Եւ քանիք յայնժամ ունային մաղթանք հեզ

Ուանքիծ դաստակք տատանէին , գու գիտես .  
Եւ 'ի ծերոց քանի՜ յոգւոց հառաչանք  
Եւ միանձանց և կուսանաց երգոց վանգք ,  
Կամ 'ի բացուստ ուստեք կրղզեաց ծովամոյն ,  
Կամ 'ի սիրով լոկ լըցեալ խոր յամարոյն .  
Յայտնեալ զի սէրդ ամենուրեք յարածամ  
Յերկինս յերկրի առ քեզ դառնայ համակամ : . . .

Ա՛հ , իցէ՜ սէր , իցէ՜ և սիրտս որ հաղիւ  
Եւ իբր անուամբ չափ ծանեաւ զսէր՝ սուրբ ըզձիւ  
Այսուհետեւ ոչ ընդ աշխարհ և ընդ քեզ ,  
Այլ սրբեցեցէ զանձն իւր 'ի սէրդ և յեթերս .  
Իցիւ և երգես այս ցուրտ և լոկ արձագանգք  
Ճըշմարտութեամբ վառեալ սիրոյ լիցին ձայնք .  
Ոչ սրտեցէ այլ սիրտ շըրթանց , երգն՝ ըզձին ,  
Այլ սիրտ և շունչ և քնարս և բնաւ քեզ լիցին :

Հ . Ղ . Մ

## ԲԱՆԱՍԻՐԱԿԱՆ ՏԵՂԵԿՈՒԹԻՒՆ

ՊԱՏՄՈՒԹԻՒՆ

### Լ չր Գայրն :

‘ԼԱՓՈԼԵՈՆԻՆ ԷՆ ԷՄԵՐ մէկ մարդ մը  
չէ եղած որ այնչափ մեծ անուն հանէ  
աշխարհքիս վրայ աս դարուս մէջ ,  
որչափ աս բանաստեղծը . բնութիւնն  
ալ կարծես թէ ասոր տուած խելքն  
ու կարգէ դուրս կատարելութիւնն  
ըրբնաւորութիւնները՝ ուրիշ մարդու  
չէ տուեր :

Վեորդ Գայրն ծնաւ Լ ռնտրա  
քաղաքը 1788<sup>ին</sup> յունուարի 22<sup>ին</sup> . հօրը  
անունն էր Յովհաննէս Գայրն , իսկ  
մօրը Լատարինէ Լորտն : Չէր կար-  
ծուէր որ իրեն զեղի ու անխելք հայ-  
րը այսպիսի հանճարի տէր տղայ ու-  
նենայ . անոր մեռնելէն ետքը մօրը  
ձեռքը մնաց տղուն կրթութիւնը ,  
բայց անիկայ ալ իր տաք ու կրակոտ  
բնութեամբը տղուն կրակը աւելցուց՝  
քան թէ պակսեցուց : Լ պըրտին քա-  
ղաքը կալուածներ ունենալով , մայրը  
հոն քաշուած էր . տղան ալ դեռ հինգ  
տարեկան ատենը դպրոց խրկեցին ,  
ու յայտնի եղաւ իրեն կուուսէր՝ ան  
հանդարտ ու ծոյլ բնութիւնը : Պըզ-  
տիկուց կ'երևնար վրան մինակ կենա-  
լու սէր մը . ուստի օրերով ծովուն ե-  
զերքը կը պտըտէր մինակ , ու մօրը